Կադաստրի կոմիտեի ղեկավար
պարոն Սուրեն Թովմասյանին

քաղաքացի՝ Տաթևիկ Մարտինի Ասատրյանից

հաշվառման հասցե՝ *ՀՀ,ք. Երևան,* [redacted]

էլեկտրոնային փոստ՝ tatevik.asatryan55@gmail.com

հեռախոսահամար՝ [redacted]

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ **ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ**

Հարգելի՛ պարոն Թովմասյան,

Խնդրում եմ ՀՀ վարչապետի 2025 թվականի սեպտեմբերի 22-ի N 835-Լ որոշման 4-րդ կետով հաստատված N 4 հավելվածի պահանջներին համապատասխան ինձ ընդգրկել Կադաստրի կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի կազմում:

Մարզը կամ համայնքը, որտեղ հայտատու ֆիզիկական անձը ծավալում է իր գործունեությունը

ՀՀ Երևան, ինչպես նաև ՀՀ Կոտայքի մարզ (Աբովյան համայնք):

Կադաստրի կոմիտեի գործունեության այն ոլորտը, որում հայտատու ֆիզիկական անձը ունի համապատասխան գործունեության փորձ կամ մասնագիտական փորձառություն

Ունեմ ավելի քան 8 տարվա մասնագիտական և կառավարման փորձ շինարարության, անշարժ գույքի զարգացման, քաղաքաշինության և ծրագրերի կառավարման ոլորտներում: Մասնագիտական գործունեության ընթացքում ղեկավարել և համակարգել եմ կառուցապատման ծրագրեր, անշարժ գույքի պետական գրանցման և կադաստրային գործընթացներ, քաղաքաշինական փաստաթղթերի նախապատրաստում, պայմանագրային հարաբերությունների կառավարում, ինչպես նաև պետական մարմինների, ֆինանսական կազմակերպությունների և մասնավոր հատվածի միջև համագործակցության գործընթացներ: Ունեմ նաև ֆինանսական կառավարման, բանակցությունների, կոնֆլիկտների և ճգնաժամային իրավիճակների կառավարման փորձ:

Լրացուցիչ նշումներ

Որպես Կադաստրի կոմիտեի ղեկավարին կից հասարակական խորհրդի անդամ՝ նպատակ ունեմ նպաստել կադաստրային ծառայությունների կատարելագործմանը, թվայնացմանը, անշարժ գույքի պետական գրանցման գործընթացների արդյունավետության բարձրացմանը, կառուցապատման ոլորտում առկա խնդիրների լուծմանը և հանրային մասնակցության ամրապնդմանը:

Հայտատու՝

Տաթևիկ Մարտինի Ասատրյան

(ստորագրություն)

Առդիր՝ 6 էջ

«03» հուլիսի 2026 թ